ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N: 1
N: ՀՀԳՆՋՏԴԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՍՀՋ-17-01
ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 30 սեպտեմբերի 2015 թ.

«Սևան-Հրազդանյան-Ջրառ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն), ի դեմս տնօրենի պաշտոնակատար Ս. Հովհաննիսյանի, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Ռան-Օիլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս տնօրեն Ս. Բաղդասարյանի, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 20 հոդված 5 կետի 4 ենթակետի «բ» մասի դրույթները, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Արտադրական իրավիճակի փոփոխման հետ կապված ինդուստրիալ յուղի պահանջարկի ավելացման հետևանքով Գնորդը պահանջում է, և Վաճառողը լրացուցիչ մատակարարում է 360 լ. Ի50Ա մակնիշի ինդուստրիալ յուղ:
2. Պայմանագրի N: 2 և N: 3 հավելվածներն ընդունել հետևյալ խմբագրությամբ.

Հավելված N 2
« 17 » « 08 » 2015 թ. կնքված
N: ՀՀԳՆՋՏԴԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՍՀՋ-17-01
գնման պայմանագրի

ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/Հ	Ապրանքի			Նախատեսվում է գնել 2015 թ.						Ընդամենը	
	Անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը	օգոստոս		սեպտեմբեր		հոկտեմբեր			
				քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը
1	2	3	4	5	6	7	8	9	10	13	14
1	Յուղ արդյունաբերական Ի-50Ա	լ.	1000	500	500000	500	500000	360	360000	1360	**1360000**
2	Քսայուղ Լիտոլ-24	կգ	1450	100	145000	100	145000			200	**290000**
3	Յուղ տրանսֆորմատորային Տ-1500	լ.	900	330	297000	330	297000			660	**594000**
Ընդամենը					942000		942000		360000		**2244000**

Հավելված N 3
« 17 » « 08 » 2015 թ. կնքված
N: ՀՀԳՆՋՏՊԿ-ՇՀԱՊՁԲ-11/15-ՍՀՋ-17-01
գնման պայմանագրի

ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

Վճարման ժամանակացույց*

ՀՀ դրամ

N	Ապրանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2015 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում			
		հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1.	Հիդրավլիկ համակարգերում և այլ նպատակով օգտագործվող յուղ Ի-50Ա կամ համարժեք	500000	1000000	1360000	**1360000**
2	Տեխնոլոգիական յուղ յուղ Լիտոլ-24 կամ համարժեք	145000	290000	290000	**290000**
3	Էլեկտրամեկուսիչ յուղ	297000	297000	594000	**594000**

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

3. Սույն պայմանագրի 4.1 կետը ընդունել հետևյալ խմբագրությամբ.

« 4.1 Սույն պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 2244000 (երկու միլիոն երկու հարյուր քառասունչորս հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:»

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Սևան-Հրազդանյան-Ջրառ» ՓԲԸ	«Ռան-Օիլ» ՍՊԸ
Տնօրենի պաշտոնակատար	Տնօրեն
_______ Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	_______ Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Կ. Տ.	Կ.Տ.